



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«8» Ընդհանրական 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ  Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-63/16 բողոքը քննող

Հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.05.2016թ. թիվ 1/73-1/14484-16 գրությամբ ներկայացված «Կարին-Գոհար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04202465) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Ոսկետափի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 11.05.2016թ. գրության հիման վրա, 18.05.2016թ. թիվ 1/73-1/14484-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Կարին-Գոհար» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

2. «Կարին-Գոհար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 19.05.2016թ. թիվ 02/04.1/1949-16 գրությամբ դիմել է «Կարին-Գոհար» ՍՊԸ-ին:

Ընկերությունը 16.09.2016թ. Կենտրոնին ուղղված գրությամբ հայտնել է, որ մասնակցել է «Ոսկետափի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՄԲԱՀՈԱԿ-ՇՀԱՊԶԲ-16/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն՝ կից ներկայացնելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչության 15.09.2016թ. տեղեկանքի պատճենը, ըստ որի Ընկերությունը 25.01.2016թ. (հայտը ներկայացնելու օր) դրությամբ չունի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ:

3. «Ոսկետափի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ Արարատի մարզի «Ոսկետափի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ը 11.05.2016թ. գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել, որ Ընթացակարգը հայտարարվել է չկայացած՝ հիմք ընդունելով Նախարարության եզրակացությունը, համաձայն որի՝ «Կարին-Գոհար» ՍՊԸ-ն ունի ժամկետանց պարտավորություններ:

4. ՍՑ-ԳԲԽ-63/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 18.05.2016թ. թիվ 1/73-1/14484-16 գրությամբ ներկայացված «Կարին-Գոհար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Ոսկետափի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՄԲԱՀՈԱԿ-ՇՀԱՊԶԲ-16/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կարին-Գոհար» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (25.01.2016թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.01.2016թ. ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության 2-րդ կետով որոշում է կայացվել Ընթացակարգի 1-131 չափաբաժինների մասով որպես 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Կարին-Գոհար» ՍՊԸ-ին:

4. Պատվիրատուն, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Կարին-Գոհար» ՍՊԸ-ի վերաբերյալ:

5. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Կարին-Գոհար» ՍՊԸ-ն **2016թ. հունվարի 25-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)** ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 117.120 ՀՀ դրամի չափով:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 01.02.2016թ. ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 1-ին կետով որոշել է, հիմք ընդունելով

Նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը՝ մերժել «Կարին-Գոհար» ՍՊԸ-ի հայտը:

7. Ընկերությունը 16.09.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ **(25.01.2016թ.)** չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ՝ կից ներկայացնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի տարածքային հարկային տեսչության 15.09.2016թ. տեղեկանքը, համաձայն որի «Կարին-Գոհար» ՍՊԸ-ն 25.01.2016թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

8. Կենտրոնը 20.09.2016թ. թիվ 01/04.1/3510-16 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել «Կարին-Գոհար» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 25.01.2016թ. ունեցե՞լ է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ **ժամկետանց հարկային պարտավորություններ**, թե ոչ:

9. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, հիմք ընդունելով Արտաշատի տարածքային ՀՏ-ի տրամադրած տեղեկատվությունը, 13.10.2016թ. թիվ 1/6-1/31051-16 գրությամբ Կենտրոնին տեղեկացրել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում «Կարին-Գոհար» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 40524934) 25.01.2016թ.-ին չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ:

5. ՍՑ-ԳԲԽ-63/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.05.2016թ. թիվ 1/73-1/14484-16 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, Ընկերության 16.09.2016թ. գրությունը, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի 13.10.2016թ. թիվ 1/6-1/31051-16 գրությունը և ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի տարածքային հարկային տեսչության 15.09.2016թ. տեղեկանքի պատճենը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և իրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Այսպիսով, «Ոսկետափի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՄԲԱՀՈԱԿ-ՇՀԱՊԶԲ-16/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որի թվով 131 չափաբաժիններին մասնակցելու նպատակով «Կարին-Գոհար» ՍՊԸ-ն ներկայացրած հայտի N 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (25.01.2016թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Պատվիրատուի Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմանն ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Կարին-Գոհար» ՍՊԸ-ն **2016թ. հունվարի 25-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 117.120 ՀՀ դրամի դրամի չափով:**

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու հանգամանքը, 01.02.2016թ. ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 1-ին կետով որոշել է մերժել «Կարին-Գոհար» ՍՊԸ-ի հայտը:

Կենտրոնը հայտնում է, որ «Կարին-Գոհար» ՍՊԸ-ն ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի տարածքային հարկային տեսչության 15.09.2016թ. տեղեկանքը, համաձայն որի՝ Ընկերությունը 25.01.2016թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

Ի պատասխան Կենտրոնի 20.09.2016թ. թիվ 01/04.1/3510-16 գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, հիմք ընդունելով Արտաշատի տարածքային ՀՏ-ի

տրամադրած տեղեկատվությունը, 13.10.2016թ. թիվ 1/6-1/31051-16 գրությամբ Կենտրոնին տեղեկացրել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում «Կարին-Գոհար» ՍՊԸ-ն **25.01.2016թ.-ին (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)** չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի 13.10.2016թ. թիվ 1/6-1/31051-16 գրությունը և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային ՀՏ-ի 15.09.2016թ. տեղեկանքը, համաձայն որի «Կարին-Գոհար» ՍՊԸ-ն **25.01.2016թ.-ին (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)** չունի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, Կենտրոնը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 18.05.2016թ. թիվ 1/73-1/14484-16 գրությամբ ներկայացված «Կարին-Գոհար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:


Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա չէ «Կարին-Գոհար» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հիմքը, Կենտրոնն առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 18.05.2016թ. թիվ 1/73-1/14484-16 գրությամբ ներկայացված «Կարին-Գոհար» ՍՊԸ-ին (<ՎՀՀ՝ 04202465) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բոլորը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
Պետի տեղակալ՝




Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-63/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Գրիգորյան